# ՔԱՂՀԱՆ[1]




Գարնան զութան հանեցի,
Յա՛ր, նայ, նայ, նա՜յ, նայ, նա՜յ,
Արտը բամբակ ցանեցի,
Սոնա՛ յար, նա՜յ, նայ, նա՜յ:

Ամառն եկավ, քաղն[2] եկավ,
Յա՛ր, նայ, նայ, նա՜յ, նայ, նա՜յ,
Քաղհանավոր ճարեցի,
Սոնա՛ յար, նա՜յ, նայ, նա՜յ:

Քաղհան կանեմ հե՝ բարով,
Տոլմա կեփեմ բիբարով,
Աշնան անի լավ օրեր՝
Բամբակ քաղեմ նուբարով[3]:

Բերնեմ սայլը, սար հանեմ,
Սար հանեմ ու տուն տանեմ,
Դուրս գա չարի չար աչքը,
Ձմեռ հանգիստ օր կանեմ:

1. Քաղհան - արտի, ցանքի մեջ բուսած մոլախոտերը մաքրելը
2. Քաղ - ձեռքով հատ-հատ պոկելը
3. Նուբար - տարվա առաջին պտուղը